

ՀՏԴ 94 (479.243)

Պատմություն

Ֆելիքս Մովսիսյան

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Վանաձորի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ

[felmov@mail.ru](mailto:felmov@mail.ru)

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Արցախյան ազգային ազատագրական շարժումը խորհրդային կենտրոնական մամուլը լուսաբանում և գնահատում էր ուղեցույց ունենալով ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հապճեպ ընդունած որոշումը: Այն հայության հոգևոր վերածնության շարժումը խորհրդային հանրությանը ներկայացնում էր որպես «առանձին ծայրահեղականների անպատասխանատու կոչեր», իսկ ազգային միավորման պահանջը՝ «անջատողականների» գործողություններ, որն իբր թե նպատակ էր հետապնդում վերացնել երկրի ներքին սահմանները: Մամուլը հետագայում թույլ փորձեր արեց բացահայտելու արցախյան շարժման իրական պատճառները, որոնք համարում էր անհատի պապաշտամունքի տարիներին թույլ տված սխալներն ազգային քաղաքականությունում և լճացման ժամանակաշրջանը: Չնայած դրան՝ կենտրոնական մամուլը ելնելով ժողովուրդների եղբայրական բարեկամության և ինտերնացիոնալիզմի գաղափարախոսական կաղապարներից, փորձելով հակակշռել Հայաստանում և Ադրբեջանում ծավալված շարժումն ու գործողությունները, երկու ժողովուրդներին սթափության, զգոնության, իմաստության կոչեր էր անում և հորդորում փոխըմբռնման ու համերաշխության ուղիներ փնտրել ստեղծված փակուղային վիճակից դուրս գալու համար:

**Բանալի բառեր.** *Լեռնային Ղարաբաղ, հայություն, շարժում, հանրահավաքներ, միավորում, մամուլ, կուսակցություն, հրապարակումներ, գնահատական:*

Феликс Мовсисян

**АРЦАХСКОЕ НАЦИОНАЛЬНОЕ ДВИЖЕНИЕ В ОЦЕНКЕ ЦЕНТРАЛЬНОЙ СОВЕТСКОЙ ПЕЧАТИ**

Арцахское национально-освободительное движение советская центральная печать освещала и оценивала с позиции резолюции, наспех принятой политбюро ЦК КПСС. Духовное возрождение армянства представлялось как «безответственные призывы отдельных экстремистов», а требования национального единства – как деятельность «сепаратистов», которая преследовала цель ликвидировать внутренние границы страны. Позже в печати появились слабые попытки выяснения подлинных причин арцахского движения, которые считались ошибками, допущенными в национальной политике в годы культа личности и в период застоя. Несмотря на это, центральная печать, исходя из идеологических моделей братской дружбы народов и интернационализма и пытаясь нейтрализовать разрастающиеся движения и активную деятельность в Армении и Азербайджане, призывала оба народа к трезвости, бдительности, мудрости и настоятельно убеждала найти пути для взаимопонимания и согласия для выхода из создавшейся тупиковой ситуации.

**Ключевые слова:** *Нагорный Карабах, явление, движение, митинг, объединение, партийная печать, публикации, оценка.*

Feliks Movsisyan

**THE ARTSAKH NATIONAL MOVEMENT IN THE ESTIMATION OF THE CENTRAL SOVIET PRESS**

The central Soviet press interpreted and evaluated the Artsakh national-liberation movement guided by the hasty resolution of the Political Bureau of the Central Committee of the Communist Party of the Soviet Union. It presented the movement of the spiritual rebirth of Armenians as “irresponsible appeals by some extremists” and the call for national unification as “the actions of separatists, which aimed at abolishing the internal borders of the country”. Later the press made weak attempts to reveal the real causes of the movement, considering them to be the mistakes made in the national policy during the years of the cult of personality and the period of stagnation. In spite of this, based on ideological stereotypes of brotherly friendship and internationalism and trying to counterbalance the movement and activities expanding in Armenia and

Azerbaijan, the central press called on both nations to be alert, sober and wise and urged them to look for ways of mutual understanding and solidarity in order to get out of the dead end.

**Key words-** Nagorno Karabagh, appearance, movement, rallies (mass meetings), unification, printed media of the party, publications, estimation.

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի մասին վերջին տարիներին մեզանում հրապարակվել է մեծ թվով գիտական և այլ գրականություն, սակայն առ այսօր ուսումնասիրված չէ դարաբաղյան շարժման արձագանքն ու գնահատականը ԽՍՀՄ կենտրոնական, միութենական, ինչպես նաև արտասահմանյան մամուլում: Շարժման սկզբնավորման մասին խորհրդային մամուլի առաջին հրապարակումները բխում էին բացառապես ԽՍՀՄ Կենտկոմի դիրքորոշումից ու գնահատականից, որը համահունչ չէր գորբաչովյան վերակառուցման գաղափարախոսությանը: Թեպետ վերակառուցումը հռչակում էր «նոր մտածողություն»<sup>1</sup>, «լճացումից և պահպանողականությունից ձեռքազատում, թույլ տված սխալների շտկում»<sup>2</sup>, այնուամենայնիվ Խորհրդային Միության բարձրագույն կուսակցական ղեկավարությունը շարունակում էր մտածել ու գործել՝ հավատարիմ մնալով կոմունիստական գաղափարախոսության կաղապարներին: Վերակառուցման հռչակած նոր մտածողությունը, առավել ևս գործելակերպը, մնաց տեսանելի հորիզոնում, որի լայնահուն ճանապարհի առաջին արահետը բացեց արցախյան ազգային շարժումը: 1988թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանի «ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու մասին» որոշումը<sup>3</sup> ԽՍՀՄ ղեկավարությունն ի սկզբանե ընկալեց որպես լենինյան ազգային քաղաքականության և ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության դեմ ուղղված քայլ: ԽՍՀՄ Կենտկոմի քաղբյուրոյի փետրվարի 21-ի «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» հապճեպ ընդունած որոշումը արցախահայության սահմանադրական իրավունքի հիման վրա<sup>4</sup> անցկացրած զանգվածային խաղաղ հանրահավաքները, որոնք ընթանում էին «Լենին, կուսակցություն, Գորբաչով» կարգախոսով, գնահատեց որպես «հասարակական կարգի խախտում»: Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջը որակվեց «առանձին ծայրահեղականների անպատասխանատու կոչեր», որոնք «նպատակառուղիվ են գոյություն ունեցող ազգային-տարածքային կառուցվածքի վերանայմանը, հակասում են Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ աշխատավորների շահերին, վնասում են ազգամիջյան հարաբերություններին»<sup>5</sup>:

Օերակույտի վերածված ու իրականությունից կտրված քաղբյուրոն ոչ միայն հստակ պատկերացում չունեցավ հայ-ադրբեջանական ազգամիջյան իրական հարաբերությունների մասին, այլև անտեսում էր պատմական այն իրողությունը, որ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բնակցվել է բոլշևիկյան Կավբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի անօրինական որոշումով<sup>6</sup>՝ հաշվի չառնելով բնակչության 94 տոկոսը կազմող հայության կարծիքը<sup>7</sup>: Անտեսելով հայության օրինական պահանջը ու միասին ապրելու իդձերը, քաղբյուրոն դիմում էր «ադրբեջանական և հայկական բնակչության հայրենասիրական ու ինտերնացիոնալիստական զգացմունքներին», կոչ անելով՝ «տեղի չտալ ազգայնամոլական տարրերի սադրանքին և համակողմանիորեն ամրապնդել խորհրդային ժողովրդի եղբայրական բարեկամությունը»<sup>8</sup>: Քաղբյուրոյի որոշումն ըստ էության հակասում էր միջազգային իրավունքի աներկբա նորմա համարվող ազգերի ինքնորոշման իրավունքին<sup>9</sup> և լենինյան ազգային քաղաքականությանը: ԽՍՀՄ սահմանադրությունը մեծագույն նվաճում էր համարում «մարդկանց պատմական նոր ընդհանրության՝ խորհրդային ժողովրդի» ձևավորումը<sup>10</sup>, իսկ ԽՍՀՄ Կենտկոմի Գլխավոր քարտուղար Յու. Վ. Անդրոպովը հայտարարում էր,

<sup>1</sup> St' u Горбачев М.С. Перестройка и новое мышление для нашей страны и для всего мира. Москва 1988.

<sup>2</sup> Горбачев М.С. Октябрь и перестройка: революция продолжается. Москва, 1987. стр. 31.

<sup>3</sup> Սովետական Ղարաբաղ, 1988թ. 21 փետրվարի, էջ 1.

<sup>4</sup> Конституция СССР, статья 50, Москва, 1977, стр. 22.

<sup>5</sup> «Правда», 25 февраля 1988, N 56, стр. 2.

<sup>6</sup> Нагорный Карабах в 1918-1923гг. Отв. ред. В.А. Микаелян, Ереван, 1992, стр. 649-650; К истории образования Нагорно-Карабахской Автономной области Азербайджанской ССР, 1918-1925, Документы и материалы, Баку, 1989.

<sup>7</sup> Հայոց պատմություն, հ. 4, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 361; Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988.

<sup>8</sup> «Правда», 25 февраля 1988, N 56, стр. 2.

<sup>9</sup> St' u Барсегов Ю.Г. Народ Нагорного Карабаха - права на самоопределение. Москва, 1993.

<sup>10</sup> Конституция СССР, Москва, 1977, стр. 4.

որ ԽՍՀՄ-ում «ազգային հարցը լուծված է վերջնականապես և անդառնալիորեն»: Արցախյան շարժումից երկու տարի առաջ ընդունված ԽՄԿԿ ծրագիրը փաստում էր, որ «ազգային հարցը Խորհրդային Միությունում հաջողությամբ լուծվել է», բայց «մեր սոցիալիստական բազմազգ պետությունում նոր խնդիրներ են ծագում ազգային հարաբերությունների կատարելագործման ուղղությամբ»<sup>1</sup>: Ծագած նոր խնդիրներից առաջինն արցախահայության պահանջն էր, որին ընթացք տալու փոխարեն Մ.Ս. Գորբաչովը ջանում էր խորհրդային հանրությանը հավաստիացնել, թե Խորհրդային Միությունում Արցախի հարցի նման չլուծված 19 այլ խնդիրներ նույնպես կան, որոնք բավարարելը կնշանակի վերացնել միութենական հանրապետությունների սահմանները: Ներքին քարտեզի փոփոխություններ թույլ չտալու նպատակով քաղբյուրոն պարտավորեցրեց Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարությանը «քաղաքական և գաղափարախոսական ազդեցության բոլոր միջոցները նպատակաուղղել լենինյան ազգային քաղաքականության և ժամանակակից փուլում նրա էության պարզաբանմանը»<sup>2</sup>:

Կատարելով ԽՄԿԿ Կենտկոմի սույն հրահանգը՝ Խորհրդային Միության զանգվածային լրատվամիջոցները ձեռնամուխ եղան արցախյան ազգային և հոգևոր վերածնության շարժման լուսաբանմանը: Միութենական հեռուստատեսությունը, ռադիոն, ՏԱՍՍ-ը, «Պրավդա», «Իզվեստիա», «Սովետսկայա Ռոսսիա», «Տրուդ», «Կոմսոմոլսկայա պրավդա» կենտրոնական պաշտոնաթերթերը իրենց էջերում արցախյան շարժումը լուսաբանում էին հիմնականում ԽՄԿԿ Կենտկոմի համապատասխան բաժինների տրամադրած պաշտոնական հաղորդագրություններով: Ղարաբաղյան շարժման սկզբնավորման և առաջին օրերի դեպքերի մասին լուրերը հրապարակվում էին պաշտոնական գրաքննություն անցնելուց հետո և հիմնականում «Լենային Ղարաբաղի իրադարձությունների շուրջը» խորագրի ներքո: Այդ միօրինակությունը գալիս էր նրանից, որ «խորհրդային հասարակության ղեկավար և ուղղորդող ուժ» հանդիսացող կոմունիստական կուսակցությունը<sup>3</sup> իր քաղաքականությունը թելադրում էր կուսակցական, խորհրդային, արհմիութենական, կոմերիտական պաշտոնաթերթերին և լրատվության մյուս միջոցներին: Այդ պատճառով ղարաբաղյան շարժման մասին լուրերը միօրինակ էին նյութի շարադրանքի ոճով, բովանդակությամբ ու գնահատականով գրեթե կրկնվող և հասցեագրված երկու ժողովուրդներին: Կենտրոնական բոլոր թերթերի միատեսակ լրատվությամբ Ադրբեջանում, Հայաստանում և ԼՂԻՄ-ում փետրվարի 24-ին կայացած կուսակցական ակտիվի ժողովներից Բաքվում միահամուռ նշել են, որ արցախահայության «գործողություններն ու պահանջը ուղղված են գոյություն ունեցող ազգային-տարածքային կառուցվածքի փոփոխությանը և վնաս են հասցնում ազգամիջյան հարաբերություններին»: Ստեփանակերտի ակտիվի ժողովում շեշտել են, որ եթե «պատասխանատու քայլեր չձեռնարկվեն», ապա ստեղծված վիճակը «կհանգեցնի անկանխատեսելի կամ դժվար շտկվող հետևանքների», իսկ Երևանյան ժողովում «ակտիվը հավանություն է տվել ԽՄԿԿ Կենտկոմի որոշմանը և այն ընդունել ի ղեկավարում և անշեղ կատարում»<sup>4</sup>: Լրատվամիջոցները հայտնում էին, որ փետրվարի 25-ին Մ.Ս. Գորբաչովն ընդունելով Զ. Բալայանին և Ս. Կապուտիկյանին՝ նրանց զգուշացրել է, որ եթե արցախյան շարժումը շարունակվի, ապա այն կարող է կործանարար հետևանքներ ունենալ Ադրբեջանում ապրող շուրջ կես միլիոն հայերի համար<sup>5</sup>: Միութենական մամուլը լայնորեն լուսաբանում էր փետրվարի 26-ին երկու հանրապետությունների աշխատավորներին և ժողովուրդներին Մ.Ս. Գորբաչովի հղած ուղերձը՝ նշելով, որ այն իբր թե «ընդունվել է ըմբռնումով և երախտագիտության զգացումով»<sup>6</sup>:

Կենտրոնական մամուլը, հստակ չտիրապետելով արցախահայության պահանջի վերաբերյալ Ադրբեջանում ձևավորված պաշտոնական դիրքորոշմանն ու հասարակական կարծիքին և առաջ ընկնելով իրադարձություններից, ոչ իրատեսական գնահատական էր տալիս Մ.Ս. Գորբաչովի ուղերձի գաղափարական ազդեցությանը: Նրա դիմումը յուրովի ընկալված ադրբեջանցիները հաջորդ օրը՝ փետրվարի 27-ին, Սոււզայիթ քաղաքում հանրապետական իշխանությունների հրահանգով նախապես ծրագրված և «Մահ հայերին» կոչերով հայության նկատմամբ

<sup>1</sup> Программа Коммунистической партии Советского союза, Москва, 1986, стр. 43-44.

<sup>2</sup> «Правда», 25 февраля 1988, N 56, стр. 2.

<sup>3</sup> Конституция СССР, статья 6, Москва 1977, стр. 7.

<sup>4</sup> «Правда», 26 февраля 1988, N 57; «Известия», 26 февраля 1988 N 57.

<sup>5</sup> «Правда», 27 февраля 1988, N 58; «Известия», 27 февраля 1988 N 58.

<sup>6</sup> «Правда», 27 февраля 1988, N 58 стр 1; «Известия», 27 февраля 1988, N 58, стр 1.

ցեղասպանություն իրականացրին<sup>1</sup>: Եռօրյա այդ եղեռնագործությանը խորհրդային կենտրոնական լրատվամիջոցներն առաջին անգամ անդրադարձան միայն մարտի 1-ին, երբ Մ.Ս. Գորբաչովը Սումգայիթ գործ մտցնելուց բացի, արտաքուստ դատապարտեց կատարվածը: Նրա գնահատականը կրկնում էին միութենական պաշտոնաթերթերը, ըստ որոնց, «խուլիգանական տարրերը Սումգայիթում հրահրեցին անկարգություններ, որոնք հանգեցրեցին ողբերգական հետևանքների»<sup>2</sup>:

Համընդհանուր այս գնահատականի համայնապատկերից դուրս էր ՀամԼԿԵՄ Կենտկոմի պաշտոնաթերթ «Կոմսոմոլսկայա պրավդայի» «Տագնապով և հույսով» հոդվածը: Նրանում նշվում էր, որ Սումգայիթում «մարդկային կերպարը կորցրած կրկնահանգագործներ ու քրեական տարրեր կատարել են հանցագործություն և ոչ թե խուլիգանություն»: Ըստ թերթի, «նախապես ծրագրված և նախապատրաստված ավազակային անկարգություններին, կոտորածին ու կողոպուտին մասնակցել են նաև բնակիչները»<sup>3</sup>: «Մոսկովսկայա պրավդան» սումգայիթյան դեպքերն անվանում էր «ողբերգություն», «ավազակային հարձակում», «վանդալիզմի ակտ», որը ոչ միայն հայության, այլև «խորհրդային ողջ ժողովրդի ցավն է»<sup>4</sup>:

ԽՍՀՄ իշխանությունների վերահսկողության տակ գտնվող և նրանց գաղափարախոսական ձայնավող հանդիսացող միութենական մամուլն ու հեռուստատեսությունը, խորհրդային հանրությանը անաչառ ու ճշմարիտ տեղեկություններ չտվեցին Սումգայիթում հայերի հետ կատարված ողբերգության մասին: Փորձելով փրկել աղբբեջանցիների ազգային նկարագիրը՝ կենտրոնական մամուլը սկսեց նյութեր տպագրել այն մասին, որ Սումգայիթի կոտորածի օրերին բազմաթիվ աղբբեջանցիներ, վտանգի ենթարկելով իրենց կյանքը, մեծ թվով հայերի պաշտպանել են ելուզակների հարձակումներից, թաքցրել իրենց տներում ու ապաստան տվել: Նշվում էին կոնկրետ անուններ, ընտանիքներ, նկարագրվում էին հայերին փրկելու դեպքեր: Այդ նյութերի թվում առանձնանում էին աղբբեջանական լրատվամիջոցների հորինած երկու լեգենդ, որը շատ արագ տեղ գտավ կենտրոնական մամուլում: Խորհրդային պաշտոնաթերթերն անթաքույց ոգևորությամբ և ինտերնացոնալիստական պաթոսով գրում էին, թե ինչպես կոլտնտեսության նախագահ Խուրաման Աբբասովան փետրվարի 22-ին Ադդամի և Սակերանի սահմանին կանխեց հայ-աղբբեջանական վերահաս աղետը<sup>5</sup>, իսկ Ադդամի Կուսշբջկոմի առաջին քարտուղար Մուրթազանը ծնկի գալով ամբոխի առաջ, թույլ չտվեց հարձակվել Ստեփանակերտի վրա<sup>6</sup>: Երբ սումգայիթյան դեպքերի կապակցությամբ դատավարություն սկսվեց և որոշ չափով ճշմարտությունը բացահայտվեց, կենտրոնական թերթերն իրենց գնահատականը փոխեցին: Նրանք նույնպես սկսեցին կատարվածը «ողբերգություն» անվանել<sup>7</sup>, բայց միայն այն պատճառով, որ արյուն էր թափվել ու մարդիկ էին սպանվել: Աղբբեջանցիներին դատապարտող որևէ հոդված կենտրոնական մամուլն այդպես էլ չտպագրեց՝ սումգայիթյան ոճրագործությունն անվանելով «ծանր դաս բոլորի համար», «մեծ, հսկայական, ողբերգական, սհավոր հետևանքներով հղի թյուրիմացություն»<sup>8</sup>:

Սումգայիթյան ողբերգությունը չսասանեց հայությանը, որը զանգվածային հանրահավաքներում շարունակում էր առաջ քաշել ազգային միավորման պահանջը: Արևմտյան մամուլը, մասնավորապես «Նյու Յորք Թայմսը», գրում էր, որ վաղուց աշխարհում ոչ մի գաղափար այդքան մեծ քանակությամբ մարդկանց դուրս չէր բերել հանրահավաքների<sup>9</sup>: Կենտրոնական լրատվամիջոցներից «Պրավդան» 1988թ. փետրվար-մարտ ամիսների պաշտոնական հաղորդագրություններում հայոց ազգային շարժումը և հայության արդարացի պահանջը ներկայացնում էր որպես «ԽՍՀՄ միասնությունը խաթարող»<sup>10</sup>, «սահմանները ջարդելու»<sup>11</sup> նպատակ հետապնդող և «վերակառուցման քաղաքականությանը խանգարող» գործողություններ<sup>12</sup>: Նույն

<sup>1</sup> Տե՛ս Сумгаит...Геноцид...Гласность?, Ереван, 1989; Геноцид армян в Азербайджане и Нагорном Карабахе, Степанакерт, 1998.

<sup>2</sup> В Нагорном Карабахе и вокруг него. «Московские новости». 13 марта 1988г., N 11, стр 4.

<sup>3</sup> С тревогой и надеждой, «Комсомольская правда». 27 марта 1988, стр 4.

<sup>4</sup> Когда же наступит прозрение, «Московская правда», 14 июля 1988, стр 4.

<sup>5</sup> «Правда», марта 1988 N 7 июня 1988, N 159, стр. 2.

<sup>6</sup> «Комсомольская правда», 27 марта 1988, стр 4.

<sup>7</sup> «Правда», 10 октября 1988, N 284.

<sup>8</sup> «Известия», 11 июля 1988, N 194.

<sup>9</sup> «Собеседник». N 32, август 1988, стр.12.

<sup>10</sup> «Правда», 21 марта 1988, N 81.

<sup>11</sup> «Труд», 26 марта. 1988. стр 4.

<sup>12</sup> «Московская правда». 30 марта 1988. стр 4; «Правда», 23 марта 1988. N 83, стр 2.

միտքը կարմիր թելի պես անցնում էր Բաքու գործուղված և տեղի իշխանությունների հետ համաձայնության եկած միութենական թերթերի սեփական թղթակիցների հոդվածներում, թղթակցություններում և հարցազրույցներում: Արտաքուստ երկու ժողովուրդներին բարեկամության և համերաշխության կոչեր անող նրանց հրապարակումները քողարկված հակահայկական բնույթ էին կրում, բորբոքում հայության լայն զանգվածներին, որոնք Կենտրոնական մամուլից պահանջում էին բացահայտել «ամենից առաջ ճշմարտությունը»<sup>1</sup>:

Արցախյան շարժման էությունն ու նպատակը չընկալելը, հայության պահանջին ականջալուր չլինելը, սումգայիթյան ողբերգությունը ծուռ հայելու մեջ ներկայացնելը, հայությանը «ծայրահեղականներ» ու «անջատողականներ» անվանելը հանգեցրեց այն բանին, որ Արցախում և Հայաստանում անվստահության մթնոլորտ ձևավորվեց կենտրոնական լրատվամիջոցների նկատմամբ: Դրան նպաստեցին հատկապես «Պրավդայի»՝ «Հուլգեր և բանականություն», «Իզվեստիայի»՝ «Անջատողականները», «Տրուդի»՝ «Հուլգերը խորհրդատու չեն» հակահայկական բովանդակությամբ հոդվածները, որոնցում ասվում էր, թե Լեոնային Ղարաբաղի իրադարձությունները վերաճել են «ազգային դրսևորումների»<sup>2</sup>, մի խումբ անպատասխանատու մարդկանց «անջատողական գործողությունների»<sup>3</sup>, «ծայրահեղական տրամադրված «առաջնորդների» հրահրած հանրահավաքային ժողովրդավարության»<sup>4</sup>, որի վերջնական նպատակը գոյություն ունեցող սահմանների վերանայումն է: Կենտրոնական բոլոր լրատվամիջոցները միասնաբար, վերններից ստացված հրահանգի համաձայն, քննադատում էին մարտի 2-ին Ստեփանակերտում ստեղծված «Կռունկ» կոմիտեն և նրա գործունեությունը: Դրանք նշում էին, որ Կոմիտեի անդամները «հավակնում են ազգի առաջնորդի դերի»<sup>5</sup>, ովքեր «հանդես գալով ժողովրդի անունից, փորձում են իրենց կամքը թելադրել մարզի ղեկավարությանը... գտնելով, թե այնտեղ՝ հրապարակում, իրենց ցանկացած գործողության մանդատ են տվել»<sup>6</sup>: «Կոմսոմոլսկայա պրավդան» «Կռունկ» կոմիտեի հանդես գալը բացատրում նրանով, որ հրապարակում հավաքված մարդիկ մարզի ղեկավարությանը չէին հավատում, քարոզչությունը նրանց վրա չէր ազդում, ուստի «ստեղծված անիշխանության պայմաններում նոր դեմքերի անհրաժեշտություն առաջացավ, որոնց խոսքին կհավատային»: Թերթը «Կռունկը» համարում էր «հարգված և հեղինակավոր» կազմակերպություն<sup>7</sup>: Կենտրոնական մամուլը կոմիտեի անվանումը կապում էր հայերի համար հայրենիքի կարոտը խորհրդանշող կռունկի հետ, իսկ «Կոմսոմոլսկայա պրավդան» գրում էր, որ ոմանք «Կռունկը» «համարում են տպավորիչ հապավում՝ Комитет революционного управления Нагорным Карабахом»<sup>8</sup>: Միութենական թերթերի միահամուռ կարծիքով «Կռունկ» կոմիտեն ցրելը սոսկ ժամանակի հարց է: Այս թերթերը ներքին բավարարվածության զգացումով հայտնում էին Ադրբեջանի իշխանությունների կողմից մարտի 28-ին «Կռունկի» գործունեությունը դադարեցնելու մասին<sup>9</sup>, իսկ «Կոմսոմոլսկայա պրավդայի» կարծիքով՝ ձևականորեն ցրված կոմիտեն շարունակում է գործել իշխանությունների կամքին հակառակ<sup>10</sup>:

1988թ. մարտի սկզբին Երևանում և Մոսկվայում ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեների գործունեության վերաբերյալ կենտրոնական մամուլի դիրքորոշումը նույնպես բացասական էր: «Պրավդա», «Իզվեստիա», «Տրուդ» պաշտոնաթերթերը տարբեր վերնագրով տպագրում էին ՏԱՄՄ-ի անանուն թղթակցի Երևանից ուղարկված ընդարձակ թղթակցությունը «Ղարաբաղ» կոմիտեի մասին: Ներկայացնելով Կոմիտեի բոլոր անդամներին՝ նշվում էր, որ «ազգի առաջնորդի դերի հավակնող»<sup>11</sup> այդ մարդիկ «սեփական ժողովրդին հրում են դեպի անդունդ, բորբոքում ազգային երկպառակություն... Ձևականորեն նրանք մտավարական մարդիկ են, կրթված: Իրականում նրանք ազգային քաղքենիներ են, առանց համոզմունքների ինտելեկտուալներ, քաղաքական

<sup>1</sup> Прежде всего истина, «Правда», 11 мая 1988, N 132, стр 6.

<sup>2</sup> Эмоции и разум. «Права», 21 марта 1988, N 81.

<sup>3</sup> Сепаратисты, «Известия», март 1988.

<sup>4</sup> Эмоции - не советчик. «Труд», 26 марта 1988, стр 4.

<sup>5</sup> Наступает время решений. «Известия», 30 марта 1988, N 90, стр 6.

<sup>6</sup> Встречи после митингов. «Известия», 24 марта. 1988 N 4, стр 6.

<sup>7</sup> Время нелегких решений. «Комсомольская правда», 23 июля 1988, стр. 4.

<sup>8</sup> «Комсомольская правда», 23 июля 1988, стр 4.

<sup>9</sup> «Правда», 29 марта 1988, N 88; «Известия», 23 марта. 1988, N 88.

<sup>10</sup> «Комсомольская правда», 23 июля 1988, стр 4.

<sup>11</sup> «Труд». 26 марта 1988. стр 4; «Правда», 23 марта 1988, N 83, стр 2.

արկածախնդիրներ, ովքեր ցանկանում են իրենց համար առաջընթաց ապահովել խժոժությունների և ահաբեկության ճանապարհով»<sup>1</sup>: Կենտրոնական մամուլը տարակուսանք էր հայտնում, թե ինչու է մինչև օրս «Ղարաբաղ» կոմիտեն շարունակում իր «անկարգությունները», երբ նրա գործունեությունը դեռևս մարտին դադարեցրել է Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը: «Մոսկովսկայա պրավդան» մեղադրում էր մոսկովահայության «այսպես կոչված Ղարաբաղ» կոմիտեի անդամներին՝ հանրահավաքների կազմակերպելու, հակաադրբեջանական ելույթներ ունենալու և «իրենց անպատասխանատու գործողություններով ու կոչերով» մայրաքաղաքում վիճակն «անկանխատեսելի դարձնելու համար»<sup>2</sup>:

Կենտրոնական մամուլում ղարաբաղյան շարժմանը և նրա ղեկավարներին միտումնավոր պիտակավորում տալը խորհրդային հանրության աչքին վարկաբեկում էր շարժման իրական բնույթը, վիրավորում հայության ազգային արժանապատվությունը, կոպտորեն ոտնահարում միլիոնավոր հայերի՝ միասին ապրելու արդար պահանջը, որը շարժման օրերին դրսևորում էր կազմակերպվածություն, համախմբվածություն և չէր ենթարկվում սադրանքների: Ազգային շարժման նկատմամբ քամահրանքն ու այն չընկալելու կուսակցության և կենտրոնական լրատվամիջոցների դիրքորոշումը հանգեցրեց այն բանի, որ հանրահավաքներում «Լենին, կուսակցություն, Գորբաչով» վանկարկումները փոխվեցին «Չենք հավատում մամուլին» կոչերով<sup>3</sup>: Կենտրոնական մամուլի նկատմամբ անվստահությունը համազգային բնույթ կրեց հատկապես այն բանից հետո, երբ ադրբեջանական մամուլում տպագրված «Լուրերը թշնամու զենք են» ստահող հոդվածում առաջ քաշված միտքը կենտրոնական լրատվամիջոցները շատ արագ դարձրին իշխանությունների անգործությունն արդարացնող լուրջ փաստարկ: ԽՍՀՄ դատախազության բարձրաստիճան պաշտոնյաները ԽՄԿԿ ԿԿ հանձնարարությամբ, չցանկանալով բացահայտել սուսկայիթյան ողբերգության հրահրողներին, մամուլին հայտնում էին, թե «հետաքննությանն ամենից առաջ խանգարում են...անհայտ ուժերի» կողմից տարածվող «կեղծ ու անհիմն լուրերը»<sup>4</sup>: Կենտրոնական մամուլի լրատվության նկատմամբ անվստահությունը հասավ այն աստիճանի, որ Երևանում ոչ միայն հրաժարվեցին կենտրոնական թերթերից, այլև «Պրավդա» թերթի համարները հանրահավաքի մասնակիցները լցրեցին դագաղի մեջ, (որի վրա գրված էր «Պրավդա») և քաղաքի փողոցներում բողոքի ելույթ կազմակերպեցին:

«Իզվեստիան» թեպետ իր հրապարակումներից մեկում փաստում էր, որ ստեղծված համատարած անվստահության մթնոլորտի համար «մեղքի բաժին ունեն նաև զանգվածային լրատվամիջոցները», որոնց «հաղորդումները և ամբողջ վերլուծությունը կառուցված է այսպես կոչված համամասնության վրա»<sup>5</sup>, բայց և այնպես նույն համամասնությունը պահպանելով էր լուրեր տպագրում: Հայ ժողովուրդը կենտրոնական լրատվամիջոցներից պահանջում էր «փնտրել ճշմարտությունը, միայն ճշմարտությունը»<sup>6</sup>, մինչդեռ Խորհրդային Միության ղեկավարությանը քիչ էր մտահոգում Հայաստանում և Արցախում հասարակական կարծիքի համատարած դժգոհությունը՝ հանրությանը ճշմարիտ լրատվություն չտալու կապակցությամբ: Կենտրոնական իշխանություններին ու մամուլին տվյալ պահին ավելի շատ անհանգստացնում էր Հայաստանում և Արցախում սկսված գործադուլային պայքարը: Կենտրոնական պաշտոնաթերթերը նույն օրը տպագրած «Հարկավոր է վճռական շրջադարձ» խմբագրական հոդվածում ընդգծված շեշտում էին Հայաստանի տնտեսության՝ միլիոնների վնաս կրելը գործադուլների պատճառով<sup>7</sup>: Իրենց թղթակցությունների գլխավոր դեմքը դարձնելով գործադուլներին դեմ մարդկանց՝ միութենական մամուլը հայությանը սթափության, բանականության կոչեր էր անում, հորդորում դրսևորել «Քիչ հույզեր, ավելի շատ իմաստություն»<sup>8</sup> և վերադառնալ իրենց աշխատանքային տեղերը: Մամուլը ցավոտ խնդիր էր համարում սուսկայիթյան ղեպքերին հաջորդած փախստականների երևան գալը,

<sup>1</sup> Народ им за собой не привести, «Известия», 22 июля 1988, N 204, стр 6; Куда они вели народ, «Труд», 22 июля 1988, стр. 2.

<sup>2</sup> Когда же наступит прозрение? «Московская правда», 14 июля 1988, стр 4.

<sup>3</sup> «Известия», 26 марта 1988. N 86, стр. 3.

<sup>4</sup> Следствию мешают слухи. «Известия». 30 марта 1988. N 90; В Нагорном Карабахе и вокруг него, «Московские новости». 13 марта 1988, N 11, стр.4.

<sup>5</sup> Ст' u «Известия», 11 июля 1988. N 194, стр. 4.

<sup>6</sup> Ст' u «Труд», 26 марта 1988, стр 4.

<sup>7</sup> Нужен решительный перелом. «Правда». 17 июня 1988. N 199, стр.3; «Известия» 17 июля 1988, N 199, стр. 3; «Труд». 17 июля 1988. N 165, стр. 4.

<sup>8</sup> Меньше Эмоции, больше мудрости!; «Комсомольская правда», 1 декабря 1988, стр 4.

երբ 200 հազար մագապուրծ հայեր Ադրբեջանից հարկադրաբար գաղթեցին Հայաստան և այլ հանրապետություններ, իսկ ադրբեջանցիներն իրենց տները լքեցին Հայաստանի որոշ շրջաններում<sup>1</sup>:

Կենտրոնական լրատվամիջոցները շարունակում էին երկու ժողովուրդներին համերաշխության և խաղաղ գոյակցության, եղբայրության կոչեր անող տարբեր նյութեր տպագրել ոչ միայն Խորհրդային Միության տարբեր հանրապետությունների աշխատավորների,<sup>2</sup> այլև հայերի ու ադրբեջանցիների անունից: Այդպիսի նպատակ էին հետապնդում Է. Բադդասարովի «Մեր եղբայրության մասին» հոդվածը<sup>3</sup> «Պրավդայում», ադրբեջանցի կինոռեժիսոր Ա. Իբրահիմովի «Ունե՞նք ինչ-որ ինչ բարեկամության նկատմամբ» հոդվածը<sup>4</sup> «Սովետսկայա Ռոսսիա» թերթում, արցախցի ուսուցիչ Է. Մնացականյանի հետ «Ինձ համար ցավալի է հայրենակիցներ» հարցազրույցը և «Մենք շատ ենք, իսկ տերությունը՝ մեկը» հոդվածը<sup>5</sup> «Պրավդայում», Ադրբեջանի կոմպոզիտորների միություն առաջին քարտուղար Ա. Ալիգադեի և Երևանի պատվավոր քաղաքացի Մ. Գարագաշի խոսքը «Իզվեստիայում»<sup>6</sup>:

Կենտրոնական մամուլը ձգտում էր իր տեղեկատվությունում պահպանել հավասարակշռություն և թերթի նույն համարում նյութեր էր տպագրում միաժամանակ Հայաստանից, Արցախից և Ադրբեջանից: Դրանք երկու ժողովուրդներին խրատական տոնով հորդորում էին «ետ նայել ու հասկանալ»<sup>7</sup>, «փնտրել համաձայնություն»<sup>8</sup>, «գտնել փոխզիջում»<sup>9</sup>, «ուղիներ փնտրել դեպի փոխըմբռնում»<sup>10</sup>, «չդառնալ խաղալիք կույր ուժերի ձեռքին»<sup>11</sup> և իրենց յուրաքանչյուր գործողություն «համեմատել բանականության հետ»<sup>12</sup>: Չնայած այս ընդհանուր մոտեցմանը՝ առանձին հրապարակումներում, սկսած 1988թ. մայիսից, փորձեր էին արվում բացահայտել արցախյան շարժման դրոշմաբանությունը: Մակայն ճշմարտությունը վերհանելու փոխարեն կարևորվում էին ԼՂԻՄ-ում տարիներով չլուծված սոցիալ-տնտեսական խնդիրները<sup>13</sup> կամ էլ փորձ էր արվում մեղքը բարդել մարզի նախկին կուսակցական ղեկավարության և նրա թույլ տված սխալների վրա<sup>14</sup>: Կենտրոնական թերթերի այս մոտեցումը փոխվեց այն բանից հետո, երբ 1988թ. հունիսին Սոսկվայում կայացած կոմունիստական կուսակցության 19-րդ կոնֆերանսի օրերին կուսակցական որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ նշեցին, որ «Լեռնային Ղարաբաղի հիմնադիրն իր արմատներով տանում է ինչպես անհատի պաշտամունքի, այնպես էլ լճացման ժամանակաշրջանը»<sup>15</sup>: Ուղենիշ ունենալով այս գնահատականը՝ «Իզվեստիան» Արցախում ստեղծված վիճակը համարում էր «լճացման ծանր պտուղներ»<sup>16</sup>: «Արգումենտի ի ֆակտի» թերթը տպագրում էր ԽՍՀՄ Կենտկոմի բաժնի վարիչի տեղակալ Վ.Ա.Միխայլովի հետ հարցազրույցը, որտեղ նա նշում էր, որ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմում հայտնվելուց հետո «լուրջ սխալներ են թույլ տրվել ազգային քաղաքականությունում, ոտնահարվել են դարաբաղիների իրավունքները», ովքեր գտնում են, որ միայն Հայաստանի կազմում կարող են լիովին բավարարել իրենց ազգային պահանջները և պահպանել էթնիկ միասնությունը»<sup>17</sup>: Չնայած Արցախյան շարժման իրական պատճառների ուշացած ըմբռնմանը՝ ԽՍՀՄ Կենտկոմը փակուղուց դուրս գալու ելքը տեսնում էր ԼՂԻՄ-ում սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական և այլ տարիներով կուտակված խնդիրների լուծման մեջ: Այս իմաստով կենտրոնական մամուլը ջանում էր «Լեռնային Ղարաբաղի

<sup>1</sup> Տե՛ս Կ. Երմիշևա Ս. Դեպորտация населения армян НКАО и прилегающих районов: апрель-июнь 1988. Ереван, 1995.

<sup>2</sup> Давайте спокойно жить и работать. «Известия», 24 июня 1988. N 176; Когда же наступит прозрение? «Московская правда», 14 июля 1988, стр. 4, там же, 16 июля 1988. стр. 4; Родина у нас одна. «Труд», 23 июля 1988, стр. 3.

<sup>3</sup> О нашем братстве, «Правда», 23 марта 1988, N 83, стр. 2.

<sup>4</sup> Не посягать на дружбу. «Советская Россия», 25 марта 1988. N 70, стр. 1.

<sup>5</sup> Мне больно, земляки. «Правда». 29 мая 1988. N 150; Нас много - держава одна. «Правда». 23 июля 1988, N 205.

<sup>6</sup> Нужны доверие и мудрость, «Известия». 3 декабря 1988, N 338, стр. 3.

<sup>7</sup> Оглянуться и понять «Известия», 28 июля 1988, N 210, стр. 6.

<sup>8</sup> Искать согласие. «Известия», 21 июля 1988, N 203, стр. 3.

<sup>9</sup> Компромисс: Нагорный Карабах в судьбе страны. «Новое время», 1988, N 33.

<sup>10</sup> Искать пути к взаимопониманию, «Комсомольская правда», 4 декабря 1988, стр. 3.

<sup>11</sup> К положению вокруг Нагорного Карабаха, «Правда», 23 сентября 1988, стр. 6.

<sup>12</sup> Сверхьяс с разумом. «Правда», 22 июля 1988, N 204, стр. 6.

<sup>13</sup> Нагорный Карабах: груз проблем действительных и мнимых. «Новое время», 1988. N 38, стр. 24-26.

<sup>14</sup> Не было готовых образцов. «Известия», 22 марта 1988, N 82, стр. 3.

<sup>15</sup> «Правда», 1 июля 1988, N 183; «Известия», 1 июля 1988 N, 183; «Труд», 1 июля 1988, N 151.

<sup>16</sup> НКАО: горькие плоды застоя. «Известия», 13 июля 1988, N 195, стр. 6.

<sup>17</sup> Нагорный Карабах: корни конфликта, «Аргументы и факты», N 27, 1988, стр. 3.

բնակիչներին» քարոզչական հոդվածում հայությանը համոզել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ նախարարների խորհրդի որոշման «անաչառությունն ու վերին աստիճանի արդարացիությունը»<sup>1</sup>, որը Հայաստանում և Արցախում հավանության չարժանացավ: Կենտրոնական մամուլը միահամուռ հակասահմանադրական և «ժողովրդավարության խեղդում» համարեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1988թ. հունիսի 15-ի որոշումը՝ ԼՂԻՄ-ը Հայաստանի կազմի մեջ ներառելու մասին<sup>2</sup>: Այդ որոշումը գնահատվում էր «արկ վերակառուցման տակ», հայության գործողությունները որակվում «պատր՝ պատին» մեթոդ, որը «տանում է միայն փակուղի, սերմանում ասելություն և թշնամություն»<sup>3</sup>: 1988թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միավորման մասին որոշումը որակեց «վերակառուցման դեմ ուղղված ինքնագլուխ ներսահմանային վերաձևումներ կատարող քայլ»<sup>4</sup>, որը դարձավ ուղենիշ միութենական մամուլի համար: «Սոբեսեդնիկ» թերթի դիրքորոշմամբ՝ արցախյան շարժումը, «որին հետևում է ամբողջ աշխարհը... անտարակույս վերակառուցման քննություն է»<sup>5</sup>: Արցախյան շարժումը համարելով վերակառուցման քաղաքականության հետևանք, կենտրոնական մամուլը, առանց լուրջ հիմքեր ունենալու, մերկապարանոց հանդիմանությամբ գրում էր, թե «վերակառուցումը Հայաստանում արհեստականորեն արգելակում են»<sup>6</sup>: Արցախյան խնդրին քաղաքական լուծում չտալու ԽՍՀՄ իշխանությունների վճռական դիրքորոշումը հանգեցրեց այն բանին, որ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը հարկադրված եղավ 1988թ. նոյեմբերին արտահերթ նստաշրջանում ընդունել որոշում, ըստ որի, Հայաստանում կարող էին կենսագործվել կենտրոնական իշխանությունների միայն այն որոշումները, որոնք Գերագույն խորհուրդը կհամարեր նպատակահարմար: Դրան հետևեցին միութենական մամուլի հակահայկական<sup>7</sup> և աղբբեջանամետ<sup>8</sup> մի քանի հրապարակումներ, որտեղ հայաստանյան իշխանությունների որոշումը համարելով հակասահմանադրական և ապօրինի, հռետորական հարցադրում էր արվում. «Ո՞ւմ է դա ձեռնտու»<sup>9</sup>:

Նոյեմբերին Կիրովաբադում, Նախիջևանում, Շամխորում, Խանլարում տեղի հայ բնակչության նկատմամբ իրականացված բռնությունները, խոշտանգումներն ու նրանց գույքի թալանը Կենտրոնական մամուլը կրկին ներկայացրեց «խուլիգանական տարրերի զանգվածային անկարգություններ... որոնք հանգեցրին մարդկային կորուստների»<sup>10</sup>: Միութենական թերթերից «Կոմսոմոլսկայա պրավդան» և «Մոսկովսկայա պրավդան» կատարվածն անվանեցին «խսկական հանցագործություն», այնուամենայնիվ կենտրոնական պաշտոնաթերթի դիրքորոշումը մնաց հիմնականում անփոփոխ: Հաշտարար դատավորի դեր ստանձնած կենտրոնական մամուլը շարունակեց հավասարապես հանդիմանել երկու ժողովուրդներին անխոհեմ գործողությունների համար, պահպանել հավասարակշռություն տեղեկատվության իմաստով և հակամարտող կողմերին սթափության, իմաստության, կշռադատված որոշումներ ընդունելու կոչեր անել: Մամուլը տեղեկացնում էր, որ Երևանում և Բաքվում մտցվել է հատուկ դրություն և պարետային ժամ, վիճակը վերահսկում է զորքը, իսկ լրատվությունից դժգոհ են թե Հայաստանում և Արցախում և թե Ադրբեջանում<sup>11</sup>:

Կենտրոնական մամուլը շարունակում էր երկու ժողովուրդներին «բանականության և կամքի»<sup>12</sup>, «ազգայնամուլության վարակը»<sup>13</sup> վերացնելու, կարգուկանոնը վերականգնելու<sup>14</sup> և

<sup>1</sup> Жителям Нагорного Карабаха. «Правда», 29 июля 1988, N 211, стр 3; «Известия», 29 июля 1988, N 211, стр. 3; «Труд». 29 июля 1988, стр 4; Постижение истины. «Правда», 25 июля 1988, N 207.

<sup>2</sup> «Правда», 16 июня 1988, N 198; «Известия», 16 июня 1988, N 198; «Советская Россия», 16 июня 1988.

<sup>3</sup> Искать согласие. «Известия», 21 июля 1988, N 203, стр. 3.

<sup>4</sup> St' u «Правда», 20 июля 1988, N 200, стр. 1-4; «Известия», 20 июля 1988, N 200, стр. 1-4.

<sup>5</sup> Семь дней в Ереване. «Собеседник», 12 августа 1988, N 32, стр. 12.

<sup>6</sup> Оглянуться и понять. «Известия», 28 июля 1988, N 210, стр. 6.

<sup>7</sup> К положению вокруг Нагорного Карабаха, «Правда», 23 сентября 1988, стр. 8.

<sup>8</sup> Азербайджан: уроки и решения. «Правда», 10 октября 1988, N 284, стр 4.

<sup>9</sup> Кому это на руку? «Социалистическая индустрия», 27 ноября 1988, N 272, стр. 3; Баку, Ереван: тревожная осень, «Комсомольская правда», 27 ноября 1988, стр. 2.

<sup>10</sup> «Правда», 25-28 ноября 1988, N 330-333; «Известия», 25-28 ноября 1988, N 330-333; «Труд», 3 декабря 1988, с. 3.

<sup>11</sup> «Правда», 27-29 ноября 1988, N 333-335, стр 2; «Известия», 27-29 ноября 1988. N 333-335, стр. 2; «Комсомольская правда», 27-29 ноября 1988; Особое положение, «Ветеран». N 41, стр.13.

<sup>12</sup> Призываю к разуму и воле. «Известия», 29 ноября 1988, N 333, стр. 4.

<sup>13</sup> «Правда», 1 декабря 1988, N 336, стр. 8.

<sup>14</sup> Восстановить порядок, «Труд», 3 декабря 1988, стр. 3.



«փոխըմբռնման ուղիներ փնտրելու»<sup>1</sup> կոչեր անել: 1988թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժից հետո կենտրոնական մամուլն արցախյան խնդիրը մտածված մղեց երկրորդ պլան՝ գլխավոր ուշադրությունը դարձնելով խորհրդային իշխանությունների կողմից երկրաշարժի հետևանքները վերացնելու քայլերի և միութենական հանրապետությունների ցույց տված օգնության վրա: Հայ ժողովուրդն անտեսելով Հայաստանում գործող հատուկ դրությունն ու պարետային ժամը, երկրաշարժի ահավոր հետևանքները, իր արդարացի պահանջը կրկին հուժկու հնչեցրեց բազմահազարանոց նոր հանրահավաքներում: Հայությանն իր ստանձնած ուղուց չշեղեց ոչ Հայաստանի շրջափակումը, ոչ 1989թ. հունվարին ԼՂԻՄ-ում ԽՍՀՄ իշխանությունների ստեղծած Հատուկ կառավարման կոմիտեն, ոչ 1990թ. հունվարի 15-ին մարզում արտակարգ դրություն մտցնելը, ոչ էլ խորհրդային զորքերի կողմից Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի բռնի հայաթափումը: Այս մասին կենտրոնական մամուլը բավարարվում էր միայն պաշտոնական լուրեր տալով և ԽՄԿԿ Կենտկոմի քաղաքականությունը պաշտպանող նյութեր ու թղթակցություններ տպագրելով<sup>2</sup>: Հայ ժողովրդի համար ճակատագրական այդ օրերին նրա արդարացի ընդվզմանը սատարեցին խորհրդային մի խումբ առաջավոր մտավորականներ, գիտության, արվեստի և գրականության հայտնի գործիչներ: Նրանք պարբերաբար դիմումներ էին հղում ժողովրդավարական ուժերին և համաշխարհային հասարակայնությանը՝ կոչ անելով պաշտպան կանգնել հայության պահանջին: Այդ նպատակով նրանք Մոսկվայում ստեղծեցին «Ղարաբաղ» կոմիտեն: Հայամետ մի շարք հայտարարություններով 1989թ. հանդես եկան ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի ղեմկրատական պատգամավորական խմբակցության առանձին անդամներ: ԽՍՀՄ Կենտրոնական մամուլը խուսափում էր լուսաբանել ժողովրդավարական ուժերի գործունեությունը դարաբաղյան շարժմանը սատարելու ուղղությամբ: Կենտրոնական պաշտոնաթերթերը բավարարվում էին միայն նրանց քննադատող հոդվածներ տպագրելով<sup>3</sup>: Ժողովրդավարական ուժերի դիրքորոշմանն անդրադառնում էին միութենական մի շարք թերթեր և ամսագրեր 1990-1991թվականների իրենց անաչառ ու անկողմնակալ հրապարակումներում<sup>4</sup>:

Արցախի ճակատագրով մտահոգված խորհրդային առաջադեմ մտավորականները իրենց հրապարակումներում, ելույթներում և հարցազրույցներում ցավ էին հայտնում Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրադրության կապակցությամբ, հայության պահանջը համարում էին լուրջ փորձություն վերակառուցման համար<sup>5</sup>: Նրանք առաջ էին քաշում այն միտքը, որ «վերակառուցման հակառակորդներին հաջողվեց հրահրել հերթական ազգամիջյան կոնֆլիկտը մարդկային զոհերով»<sup>6</sup>:

Մինչև ԽՍՀՄ փլուզումը խորհրդային պաշտոնաթերթերը հավատարիմ մնացին ԽՄԿԿ Կենտկոմի որդեգրած քաղաքականությանը՝ պահպանել հավասարակշռություն Հայաստանում, Արցախում և Ադրբեջանում ընթացող կենտրոնական իշխանությունների համար անցանկալի իրադարձությունների լուսաբանման հարցում, հավատարիմ մնալ լենինյան ազգային քաղաքականությանն ու ժողովուրդների եղբայրական բարեկամության գաղափարին և ըստ այդմ հայերին ու ադրբեջանցիներին հորդորել մի կողմ դնել ազգային տարաձայնությունները, գտնել հաշտության և փոխըմբռնման ուղիներ:

<sup>1</sup> Искать пути к Взаимопониманию, «Комсомольская правда», 4 декабря 1988, стр. 3.

<sup>2</sup> Дни затмения, «Собеседник», 1989, N 42. стр.4; Нагорный Карабах. Особое управление, «Советский Союз», 1989, N 5, стр. 10-11; Нагорный Карабах: время развязывать узлы, «Московские новости», 1989, N31, 30 июля, стр. 5; Будни особого управления, «Московские новости», 5 ноября 1989, N45, стр. 15; «Правда», 22июля 1989, N стр 7; «Известия», 1989, 8 декабря, стр 3; «Красная звезда», 1989, 28 февраля; «Новое время», 1989, N 39, стр. 34-38.

<sup>3</sup> Остров реакция в Баку на статью А. Нуйкина. «Известия», 1991, 21 ноября.

<sup>4</sup> St u Карабах, боль моя, «Огонек», 1990, N 4, 20-27 января, стр. 26-29; Эффект зеркальности, «Диалог», 1990, март, N 5.

<sup>5</sup> Комо грядеши? Карабах приближается. «Medarolis Express», 1991, 11 июля, N 28, стр.23.

<sup>6</sup> «Огонек», 1990, 20-27 января, стр. 26-29.